ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

19.09.2019թ. *գործ թիվ ՎԴ/6135/05/19*
ք. Երևան

ՈՐՈՇՈՒՄ
Թիվ ՎԴ/6135/05/19 գործի
ենթակայությունն որոշելու մասին

1. Գործի դատավարական նախապատմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Լուսիկ Հակոբյանը, Անահիտ Ղազարյանը, Ռուզաննա Եղիազարյանը, Ռուզաննա Հարությունյանը, Անահիտ Շահբազյանը վիճարկման հայց են ներկայացրել ՀՀ վարչական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 30.04.2019 թվականի գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր՝ Մ. Մելքումյան) 12.08.2019թ. որոշմամբ թիվ ՎԴ/6135/05/19 գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, մասնավորապես՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Դատարանն արձանագրում է, որ Պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որն ունի իրավաբանական անձի կարգավիճակ, իսկ իրավաբանական անձինք հանդիսանում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցներ:

Տվյալ դեպքում հայցվորները խնդրել են անվավեր ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 30.04.2019 թվականի գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգը:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը հանդիսանում է իրավաբանական անձ: Այսինքն, վիճելի հարաբերությունը ծագել է հայցվորների և իրավաբանական անձի միջև, հետևաբար, դատարանը գտնում է, որ իրավաբանական անձի կողմից հաստատված գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգը չի կարող համարվել վարչարարության արդյունքում ընդունված վարչական ակտ և ՀՀ վարչական դատավարության կարգով դառնալ դատական վերահսկողության առարկա, քանի որ վարչարարություն իրականացնում են բացառապես Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև պետական այլ մարմիններ:

Վերոգրյալ վավերապայմանների բացակայության պայմաններում դատարանը գտնում է, որ ներկայացված պահանջը ենթակա չէ ՀՀ վարչական դատարանում քննության»:

Սույն գործը 16.08.2019թ. ստացվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Կենտրոն նստավայրում, նույն օրը մակագրվել է դատավոր Ա. Պետրոսյանին, սակայն գործը փաստացի հանձնվել է 21.08.2019թ.:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Պետրոսյանի 30.08.2019թ. որոշմամբ թիվ ՎԴ/6135/05/19 դատական գործն ուղարկվել է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ գործի ընդդատությունը որոշելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

«Ուսումնասիրելով հայցվորներ Լուսիկ Հակոբյանի, Անահիտ Ղազարյանի, Ռուզաննա Եղիազարյանի, Ռուզաննա Հարությունյանի և Անահիտ Շահբազյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Կոչուբաևի կողմից ներկայացված վիճարկման հայցը՝ այդ թվում վիճարկման հայցով ներկայացված իրավական հիմնավորումները և փաստական հանգամանքները, գտնում եմ, որ այն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին, այլ ոչ թե Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին»:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, վարչական դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) հայցադիմումը վարույթ ընդունելու մասին.

2) հայցադիմումը վերադարձնելու մասին.

3) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.

4) հայցադիմումը վերահասցեագրելու մասին:

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պահանջն ըստ ընդդատության վերահասցեագրելու վերաբերյալ որոշումը դատարանը կայացնում է պահանջն իրեն ընդդատյա չլինելու վերաբերյալ հանգամանքը պարզելուց հետո՝ եռօրյա ժամկետում՝ այն ուղարկելով դատավարության մասնակիցներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործն ըստ տարածքային ընդդատության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

4. Նույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական դատարանի կողմից վերահասցեագրված գործի նկատմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ ՀՀ վարչական դատարանում ստացված հայցադիմումի կապակցությամբ դատարանը մեկշաբաթյա ժամկետում համապատասխան որոշում է կայացնում հայցադիմումը վարույթ ընդունելու,

վերադարձնելու, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումն ըստ առարկայական ընդդատության վերահասցեագրելու մասին:

Դրանից բացի, դատարանը, գործի քննության ցանկացած փուլում, պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության:

Եթե, ըստ առարկայական ընդդատության գործը ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը համաձայն չէ գործի ընդդատությանը, ապա յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին: Ընդ որում, հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատարանի և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև գործերի քննության շուրջ վեճերը կարող են ծագել միայն առարկայական ընդդատության՝ գործի քննության ենթակայության կապակցությամբ: Վերահասցեագրման եղանակով գործը ՀՀ վարչական դատարանից ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր անհամաձայնությունը տվյալ գործի ենթակայության վերաբերյալ պետք է հիմնավորի գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին որոշմամբ, որպիսի հետևությունը բխում է ինչպես ենթակայության վեճերի էությունից, այնպես էլ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կարգավորումից, ըստ որի՝ առաջին ատյանի դատարանի՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն՝ հիմնավորումները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ: Մասնավորապես՝ ենթակայության վեճը ենթադրում է վիճելի իրավահարաբերության բնույթի վերաբերյալ միմյանցից տարբերվող գնահատողական եզրահանգումների առաջադրում, որպիսի եզրահանգումների հիմքում պետք է ***վկայակոչված լինեն այն իրավանորմերը և փաստական տվյալները***, որոնք հիմք են հանդիսացել իրավահարաբերության բնույթի վերաբերյալ իրարամերժ գնահատականների: Ընդ որում, միայն իրավանորմերի և փաստական տվյալների վկայակոչումը դեռևս բավարար չէ. որոշումը պետք է բովանդակի նաև հիմնավորումներ, որոնք բխեցվել են այդ իրավանորմերից և փաստական տվյալներից, և որոնցով վերահասցեագրման եղանակով գործն ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը հանգել է ենթակայության մասին վեճի առկայության վերաբերյալ հետևության:

Վճռաբեկ դատարանի նախագահը, պարզելով վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության ենթակայությանը համապատասխան, որոշում է իրավասու դատարանին, որն էլ պետք է իրականացնի տվյալ գործի հետագա քննությունը:

Ամբողջ վերոգրյալը փաստում է այն մասին, որ թիվ ՎԴ/6135/05/19 գործի ենթակայության, և հետևաբար, իրավասու դատարանը որոշելու համար անհրաժեշտ է պարզել սույն դատական գործով վիճելի իրավահարաբերության բնույթը, *մասնավորապես՝ անհրաժեշտ է պարզել թիվ ՎԴ/6135/05/19 գործով ներկայացված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 30.04.2019 թվականի գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգն անվավեր ճանաչելու վերաբերյալ վիճելի իրավահարաբերությունը կրում է հանրային, թե մասնավոր բնույթ:*

Նշված հարցադրման պարզաբանման համար նախևառաջ անհրաժեշտ է բացահայտել հանրային և մասնավոր իրավահարաբերությունների բնույթը, իրավահարաբերություններից յուրաքանչյուրի սուբյեկտային կազմը՝ ՀՀ վարչական դատավարության, ՀՀ քաղաքացիական դատավարության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների համատեքստում:

Այսպես.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) վարչական մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, ինչպես նաև Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ.

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար.

2) վարչարարություն՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ,

ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Նույն օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (այսուհետ՝ սահմանադրական դատարան) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր

իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է «հանրային իրավահարաբերություններ» եզրույթի մեկնաբանությանը և, վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, արձանագրել է, որ վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող *(տե՛ս, ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայկ Մարգարյանի թիվ ԵԱՔԴ/1369/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադարձել է անձի՝ վարչական դատարան դիմելու իրավունքին և հանրային իրավահարաբերությունների հասկացությանն ու արձանագրել է, որ անձը ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունք է ձեռք բերում այն դեպքում, երբ համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել իր իրավունքները և ազատությունները, կամ երբ նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, կամ երբ նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից անձի իրավունքների և ազատությունների խախտման փաստը միայն դեռևս բավարար չէ ՀՀ վարչական դատարան դիմելու համար, քանի դեռ այդպիսի խախտման հետևանքով առաջացող դատական գործը չի ծագում հանրային իրավահարաբերությունից: Հանրային իրավահարաբերություններն այն իրավահարաբերություններն են, որոնք ծագում են պետական մարմինների իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում: Այսինքն՝ այդպիսի իրավահարաբերությունները և դրանց արդյունքները պետք է ունենան հանրային՝ համընդհանուր բնույթ, ի տարբերություն մասնավոր՝

կոնկրետ անձին վերաբերող իրավահարաբերության (*տե՛ս, Արևիկ Արուչյանն ընդդեմ «ՀԷԳ-90» ՍՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի թիվ ԵԱՔԴ/0433/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ փաստել է, որ ինչպես ցանկացած հարաբերություն, այնպես էլ իրավական նորմերի միջոցով կարգավորվող հասարակական հարաբերությունը՝ իրավահարաբերությունը, որոշակի փոխկապակցված տարրերի (սուբյեկտ, օբյեկտ և բովանդակություն) ամբողջություն (համակարգ) է, որոնց բովանդակային-որակական տարբերությունը հնարավորություն է տալիս իրավահարաբերությունները տարանջատելու միմյանցից: Մասնավորապես՝ հանրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը:

Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձինք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ, հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ:

Իրավահարաբերության բովանդակությունը տվյալ հարաբերության սուբյեկտների փոխադարձ իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որը հանրային բնույթի իրավահարաբերության պարագայում հանգում է հետևյալին. այդ հարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանության սուբյեկտն ունի օրենքով սահմանված իր իշխանական լիազորություններն իրականացնելու պարտականություն, ինչն էլ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների իրացման անհրաժեշտ ու բավարար պայմանն է:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային իրավահարաբերության սուբյեկտ հանդիսացող իշխանության մարմինը հանրային իրավահարաբերության

շրջանակներում կարող է օժտված լինել ոչ թե իրավունքներով, այլ մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկն ընտրելու, այսինքն՝ օրենքով սահմանված որոշակի դեպքերում և բավարար փաստական հիմքերի առկայության պայմաններում վարչական հայեցողություն դրսևորելու հնարավորությամբ: Միևնույն ժամանակ հանրային իրավահարաբերության՝ իշխանական լիազորություններով չօժտված կողմը, բացի իր հանրային սուբյեկտիվ իրավունքներից, կարող է կրել նաև այդ հարաբերության բովանդակության մեջ ներառված պարտականություններ, քանի որ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց հանրային սուբյեկտիվ իրավունքներն իրացնելիս պետք է պահպանեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված ընթացակարգային իրավական կարգավորումներն ու օրենսդրական բոլոր պահանջները:

Իրավահարաբերության օբյեկտն այն նյութական և (կամ) հոգևոր արժեքն է, ինչի կապակցությամբ որոշակի իրավաբանական փաստի (փաստական կազմի) հիման վրա կողմերի միջև ծագում է իրավահարաբերությունը: Հանրային իրավահարաբերությունները ծագում են հանրային շահը սպասարկող սուբյեկտների՝ պետության և համայնքի կողմից այն իրացնելու ու կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու կապակցությամբ, քանի որ հանրային իրավունքով կարգավորվող հարաբերության շրջանակներում սուբյեկտը գործում է ոչ թե իր, այլ հանրային շահերի վերհանման և ապահովման նպատակով:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը (*տե՛ս, Գոռիշխան Իշիկյանի ընդդեմ Ընկերության և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի՝ թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Ամփոփելով ամբողջ վերոգրյալը՝ հարկ է նշել, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները:

Ինչ վերաբերում է քաղաքացիական իրավահարաբերությունների բովանդակությանը, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

2. Գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (այսուհետ՝ վարչական դատարան) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի:

Քաղաքացիական իրավահարաբերությունները քաղաքացիական իրավունքի սուբյեկտների միջև օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից ծագած իրավահարաբերություններն են:

Քաղաքացիական իրավահարաբերությունները ծագում են նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Նշվածին համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասով թվարկված իրավաբանական փաստերի, այդ թվում՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով:

Քաղաքացիական իրավունքից բխող վեճերը՝ քաղաքացիական գործերը, ենթակա են քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Մինչ սույն ենթակայության վեճին ըստ էության անդրադառնալը՝ հարկ է արձանագրել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Պետրոսյանի 30.08.2019թ. որոշումը որևէ իրավական և փաստական հիմնավորում չի բովանդակում վեճի էության վերաբերյալ, մասնավորապես՝ ներկայացված չեն այն իրավանորմերը և փաստական տվյալները, որոնց վերլուծության արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը հանգել է թիվ ՎԴ/6135/05/19 գործով հարուցված վեճի՝ հանրային իրավահարաբերություններից ծագելու մասին հետևության: Այդուհանդերձ, կարևորելով դատարանի մատչելիության և ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքների կարևորությունը և առաջնահերթությունը դատական պաշտպանության իրավունքի իրացման կառուցակարգում՝ ըստ էության անդրադառնալով սույն ենթակայության վեճին՝ պետք է արձանագրել հետևյալը.

Տվյալ պարագայում Լուսիկ Հակոբյանը, Անահիտ Ղազարյանը, Ռուզաննա Եղիազարյանը, Ռուզաննա Հարությունյանը, Անահիտ Շահբազյանը վիճարկման հայցը ներկայացրել են ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ***պետական ոչ առևտրային կազմակերպության***:

Նշված հայցով հայցվորները խնդրել են անվավեր ճանաչել «Հայաստանի պետական տնտեսգիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության 30.04.2019 թվականի գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգը:

Պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակը բացահայտված է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, որի 3-րդ հոդվածի համաձայն՝ պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով:

Նշված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ պետական կազմակերպությունները շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություններ են, որոնք ստեղծվում են միայն որոշակի կոնկրետ բնագավառներում գործունեություն իրականացնելու համար:

Պետական ոչ առևտրային կազմակերպությունները, որպես կանոն, պետական իշխանական լիազորություններով օժտված չեն, չեն իրականացնում գործադիր-կարգադրիչ գործունեություն, հետևաբար, չեն կարող իրականացնել վարչարարություն, ընդունել վարչական ակտ և հայցվորների հետ ծագած իրավահարաբերություններում չեն կարող հանրային շահի իրացման կապակցությամբ իրականացնել օրենքով սահմանված հանրային իշխանական լիազորություններ:

Սույն դեպքում ֆիզիկական անձ հանդիսացող հայցվորների կողմից վիճարկման հայցը ներկայացվել է ոչ թե հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ վարչական մարմնի, այլ՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտ հանդիսացող կազմակերպության դեմ:

Ավելին, գործում առկա փաստական հանգամանքները, վերոգրյալ իրավական վերլուծությունների համատեքստում թույլ են տալիս պնդելու, որ հայցվորների և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պատասխանող կազմակերպության միջև ծագած իրավահարաբերությունները կրում են զուտ քաղաքացիաիրավական բնույթ, քանի որ իրավունքի մասին վեճը ծագել է քաղաքացիական իրավունքի սուբյեկտների՝

ֆիզիկական անձ հայցվորների և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպության՝ պատասխանողի միջև՝ իրենց քաղաքացիական իրավունքներն ու պարտականություններն իրացնելու կապակցությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ՎԴ/6135/05/19 գործն ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

2. Սույն որոշումը և թիվ ՎԴ/6135/05/19 գործի նյութերն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Որոշման մեկ օրինակն ուղարկել ՀՀ վարչական դատարանի դատավոր Մ. Մելքումյանին՝ ի գիտություն:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ